№ 3 (7)

ISSN 1829-4820



Филиал МГУ имени М.В.Ломоносова
в г. Ереване

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

ЕРЕВАН 2019

Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղ

Филиал Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

M. Lomonosov Moscow State University, Yerevan branch

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

3 (7)

ԵՐԵՎԱՆ 2019
ЕРЕВАН 2019
YEREVAN 2019

Երաշխավորվել է տպագրության Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից

Печатается по решению Ученого совета филиала Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

Reprinted by decision of the Academic Council of the branch of the Moscow State University M.V. Lomonosov in Yerevan

«ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» գիտամեթոդական հանդեսի առաքելությունը ՀՀ-ում ռուսագիտության՝ որպես լեզվաբանության ճյուղի մասսայականացումն է, ռուսաց լեզվի ուսումնասիրման նկատմամբ հետաքրքրություն առաջացնելը, օտարերկրյա հետազոտողների ուշադրությունը հայ գիտնականների մշակումներին հրավիրելը, դրանով իսկ հայ ռուսագիտության մասսայականացումն է, համատեղ ծրագրերի, դրամաշնորհների մշակման հնարավորության ընձեռումը, մագիստրոսների ներգրավումը հետազոտական աշխատանքներին:

Назначение научно-методического журнала «**ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ**» рассматривается нами в ракурсе популяризации в РА русистики как отрасли языкознания, привлечения интереса к изучению русского языка, привлечения внимания зарубежных исследователей к разработкам армянских ученых и тем самым популяризации армянской русистики, возможности разработки совместных проектов, грантов и пр., привлечения магистрантов к научно-исследовательской работе.

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ // Научно-методический журнал, №3 (7). / Глав. ред. Саркисян И.Р.; сост.: Акопян А.С. – Ереван: Изд-во МГУ, 2019. – 142 с.

ISSN 1829-4820

ORCID: 0000-0001-9263-6791

© Филиал МГУ им. М.В. Ломоносова в г. Ереване

Հասցե՝ ՀՀ, Երևան, Վարդանանց 17, հեռ՝ (+37411) 900 110 – 101, 102:
Наш адрес: РА, г. Ереван, ул. Вардананц 17; тел. (+37411) 900 110 – 101, 102.
Address: Vardanants St. 17, Yerevan, RA; tel.: (+37411) 900 110 – 101, 102.
Էլեկտրոնային փոստ՝ (электронная почта) e-mail: po@msu.am

О НОВОМ УЧЕБНИКЕ

Тамара Ашотовна Оганисян
tamusyavk@yahoo.com

К.ф.н., доцент, профессор кафедры русского языка и профессиональной коммуникации Института гуманитарных наук Российско-Армянского университета Ереван, Республика Армения

АННОТАЦИЯ

Представление одним из авторов нового учебника на армянском языке «Теория перевода. Лингвистический аспект» преследует единственную цель – проинформировать учащихся вузов нашей республики, а также всех, кого интересуют современные лингвистические проблемы в рамках частной теории русско-армянских и армянско-русских переводов о том, что уже есть такой учебник на армянском языке. Он, как нам кажется, доступнее для желающих ознакомиться с предложенными проблемами, чем источники на русском, английском, немецком и других языках. Тем более, что большой объем научной и справочной литературы представлен в самом учебнике и дает возможность углубиться в интересующие читателя проблемы перевода.

При наличии совершенно неоспоримой исторической и современной культуры перевода в Армении, тем не менее существует большой дефицит профессиональной и лингвистической подготовки переводчиков.

Руководствуясь именно таким доводом, мы, параллельно с уже существующими в нашей республике и изданными специалистами различных вузов пособиями по общей теории перевода, посчитали необходимым наличие также учебника на армянском языке по лингвистическим проблемам теории перевода.

Ключевые слова: лингвистический аспект перевода, билингвизм, высокий уровень профессиональной подготовки переводчиков, частная теория перевода, техника перевода с армянского на русский и русского на армянский язык.

Հայ լեզվաբան-մասնագետին և սովորողին հասցեագրված, թարգմանության տեսության լեզվաբանական հիմնախնդիրներին վերաբերող այս աշխատանքը նպատակ ունի ի մի բերելու գիտության տվյալ ոլորտում գոյություն ունեցող տեսական նյութը, ներկայացնելու թարգմանության ասպարեզում եղած գիտական հետազոտությունների մշակումների մեր ժամանակի իրական պատկերը, հայերենից ռուսերեն և ռուսերենից հայերեն կատարված թարգմանությունների գործնական փորձի օրինակով ցույց տալու թարգմանության տեխնիկան և լեզվական գիտելիքների անհրաժեշտությունը ռուսերենի և հայերենի համեմատական ուսումնասիրության ոլորտում:

Թարգմանության տեսության լեզվաբանական հայեցակետը ներկայացնող դասագրքի գաղափարը ծագել է լոկ բուհական աշխատանքի փորձի հիման վրա, երբ պարզվել է, որ հայերենից ռուսերեն և ռուսերենից հայերեն թարգմանության լեզվաբանական տեսությունը, նրա արդի ուղղություններն ու խնդիրները հետևողականորեն ու ամբողջական ձևով հայերեն լեզվով շարադրված չեն մեկ գրքում: Իսկ դրա կարիքը խիստ զգացվում է Հայաստանի բուհերի մեծ մասում, որտեղ դասավանդում են թարգմանության տեսությունը և պատրաստում թարգմանիչներ՝ անկախ դասավանդման նպատակից ու թարգմանության լեզվից, քանի որ տեսությունը բոլոր տիպի թարգմանությունների ու թարգմանիչների համար է, իսկ Հայաստանի բուհերում այն պետք է ուսումնասիրել հայերեն: Հայերեն մենագրություններ ու թարգմանության առանձին ոլորտներին նվիրված աշխատություններ, ինչպես նշեցինք, կան, և դրանք մենք, իհարկե, ներառել ենք դասագրքի Գրականության ցանկում: Սակայն Հայաստանում՝ լեզուների տիպաբանության ու թարգմանության

լեզվական կողմի վերլուծության վրա հիմնված թարգմանության լեզվաբանական տեսությունը համեմատաբար դեռ նոր զարգացող ուղղություն է:

Խնդրո առարկա հայեցակետերը ռուսերեն, անգլերեն և այլ լեզուներով հրապարակվել են՝ սկսած անցյալ դարի կեսերից և այսօր էլ այս ուղղությամբ գիտական միտքը զարգանում է:

Հարցի մյուս կողմն էլ այն է, որ հայերեն-ռուսերեն լեզվական զուգադրումների ու դրանք թարգմանության մեջ կիրառելու խնդիրների մասին ժամանակակից հետազոտությունները սակավաթիվ են:

Գիրքը կազմված է մի քանի բաժիններից: Առաջինը նվիրված է հայերեն թարգմանություններին, թարգմանչական գործի պատմությանը՝ սկսած հին ժամանակներից մինչ մեր օրերը: Իր տեսակի և ընդգրկված ժամանակահատվածի մեջ սա եզակի հետազոտություն է: Երկրորդ բաժինը պարունակում է թարգմանության համաշխարհային պատմական ու արդի լեզվաբանական և տեսական հարցերի ընդհանուր դիտարկումները՝ ներառելով բուն թարգմանական գործընթացի տարբեր կողմերը: Երրորդ գլուխը նվիրված է թարգմանության լեզվաբանական համակարգվածության հարցերին, ներառյալ լեզվի գործառական տարբեր ոճերի թարգմանության առանձնահատկությունները: Չորրորդը ընդգրկել է թարգմանական միջոցների և եղանակների մասին տեղեկություններ: Հինգերորդը համակարգում է ռուսերենի ու հայերենի առնչությունները, ռուսերենից հայերեն և հայերենից ռուսերեն տարբեր արձակ նյութերի, զանազան գործառական ոճերի պատկանող տեքստերի թարգմանության հարցերը, ներկայացնում այդ երկու լեզուներով թարգմանության տեխնիկայի օրինակները:

Դասագրքում արծարծված տեսական բոլոր հիմնախնդիրները դիտարկվել են արձակ տեքստերի թարգմանության կիրառմամբ: Մենք մտածված կերպով չենք դիմել չափածոյի թարգմանության տեսական հիմքերին՝ ելնելով նախ դասագրքի ծավալի, ապա նաև չափածոյի թարգ-

մանության նկատմամբ հատուկ մոտեցման և արձակի ու չափածոյի թարգմանության սկզբունքորեն տարբեր լեզվաբանական հիմնավորումների անհրաժեշտության գիտակցումից: Չափածոյի թարգմանության հարցերը գտնվում են լեզվաբանական ու նշանաբանական մոտեցումների սահմանագծին և, լեզվաբանության հետ մեկտեղ, այլ գիտական հարաբերակցությունների շրջանակում (գրականագիտություն, պոետիկա, նշանաբանություն):

Իրենց շարադրանքում հեղինակները ղեկավարվել են հետևյալ երկու սկզբունքով. նախ՝ ներկայացնել յուրաքանչյուր թեմայի նյութը սահմանափակ դրույթներով, դրանով իսկ խթանելու համար սովորողի հետաքրքրությունը նյութի այն հատվածի վերաբերյալ, որի նկատմամբ կա անհատական հակում: Եվ երկրորդը՝ նշագծել ու նախնական տեղեկությունը տալ թարգմանության այն ուղղությունների մասին, որոնք դեռ բավարար ուսումնասիրված չեն թե ընդհանուր թարգմանաբանության, թե մասնավորապես՝ հայերեն-ռուսերեն և ռուսերեն-հայերեն գործնական թարգմանության մեջ, և ցույց տալ այդ ուղղության մասնագետներ պատրաստելու անհրաժեշտությունը:

Դասագրքի վերջում ներկայացրած գրականությունը ընտրվել է հստակ մի նպատակով՝ հնարավորություն տալ սովորողին ցանկության դեպքում գոյություն ունեցող հրատարակությունների ընդլայնված ցանկի օգնությամբ խորանալ թարգմանության տեսական ու գործնական հարցերի ուսումնասիրության մեջ: Առանձին նշենք, որ մտածված չենք արել հղումներ՝ այս կամ այն անունը, գիտական հայեցակարգը կամ մոտեցումները հիշատակելիս, կամ էլ հենց տեքստում ներկայացրել ենք հեղինակին ու աղբյուրը, քանի որ փորձում ենք դրանով նունպես հետաքրքրել ուսանողին, ուղղորդել նրա ինքնուրույն պրպտումները:

Նշված հինգ գլուխներից բացի դասագիրքը պարունակում է հավելվածներ: Առաջին հավելվածը ներկայացնում է ռուսերենի ու հայերենի

համակարգային զուգադրումների ուղեցույց, իսկ երկրորդը՝ թարգմանաբանական եզրույթների ռուսերեն-հայերեն համառոտ բառարան:

Մի քանի խոսք դասագրքի լեզվի բառապաշարի մասին: Տեքստում զուգահեռաբար օգտագործվել են և հայերեն թարգմանված, և օտարալեզու եզրույթներ ու ընդհանուր գործածության բառեր, որոնք նույնպես պետք է ծառայեն ապագա թարգմանչի հատուկ ուշադրությունը գրավելու նպատակին:

Ժամանակակից թարգմանության գործընթացում լեզվաբանական տեսության կիրառումը, ինչպես նաև գործնական թարգմանության ասպարեզում ռուսերենի և հայերենի լեզվական դիտարկումների մասով լեզուների համադրությունը, դրանց ուսումնասիրություններն ու վերլուծությունը հեղինակների բազմամյա աշխատանքի արդյունքն են:

Չհավակնելով լինել վերջնական ճշմարտության քարոզչի դիրքերում, նշենք, որ դասագրքի հեղինակները սիրով և երախտագիտությամբ կընդունեն յուրաքանչյուր գիտական առաջարկություն, հիմնավոր լրացում և ստեղծագործական փոփոխություն:

Թարգմանության տեսությունը բնորոշվում է որպես երկլեզվական հաղորդակցության գիտականորեն հիմնավորված կաղապարի տեսական ու գործնական աղբյուր: Գոյություն ունեն թարգմանաբանության ընդհանուր և մասնավոր տեսություններ:

Թարգմանչական գործունեության տեսական ըմբռնումը անկասկած ունի նաև գործնական և կիրառական նշանակություն: Այս ոլորտում իրենց արդյունքով առավել արժեվորվում են ԱՄՆ, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ռուսաստանի և մի շարք այլ երկրների գիտնականների ուսումնասիրությունները:

Թարգմանչի մասնագիտական պատրաստվածությունը ենթադրում է արդի թարգմանաբանության հիմնական դրույթների մասին նրա տեղեկացված լինելը և գործնական խնդիրների լուծման համար դրանք օգտա-

գործելու կարողությունը: Այսինքն, հայրենական և օտարերկրյա տեսաբանների աշխատությունների ուսումնասիրությունը ապագա թարգմանիչ պատրաստելու կարևոր բաղադրիչներից մեկն է:

Թարգմանության ընդհանուր տեսության ուսումնասիրության առարկան թարգմանական համընդհանրություններն են, թարգմանության այն խնդիրներն ու երևույթները, որոնք ընդհանուր են բոլոր լեզուների համար, իսկ թարգմանության մասնավոր տեսությունը վերաբերում է լեզուների որոշակի զույգի, որոշակի ժանրի կամ էլ գործառական ոճի տեքստերի թարգմանությանը: Թեև առավելապես 20-րդ դարի վերջում թարգմանությունը ձեռք է բերել ակնհայտ հաջողություններ, նրա շատ խնդիրներ դեռևս չեն լուծվել, իսկ եղած լուծումները հաճախ վիճելի են: Թվարկենք դրանցից մի քանիսը:

1. Նույնականության /identity/ հասկացությունը, որը թարգմանության տեսության հիմնարար, գլխավոր հասկացությունն է: Նույնականություն տերմինը գործածվում է մի շարք գիտակարգերում: Թարգմանության տեսության մեջ այն սահմանվում է որպես թարգմանական տեքստի ճշգրիտ համապատասխանություն ելակետային տեքստին, ինչը ենթադրում է նրանց իմաստային, գործառական-ոճական և գործաբանական հայեցակերպերի լիակատար համընկնումը: Նույնականացման խնդիրը թարգմանության հիմնական խնդիրն է և հիմնարար է թարգմանության պրակտիկայում: Ուստի պատահական չէ, որ թարգմանության բոլոր մշակված և մշակվող մեթոդները, եղանակները և հնարները այսպես թե այնպես նպատակ ունեն ապահովելու թարգմանության նույնականությունը:

2. Թարգմանաբանության մյուս կարևոր հասկացությունը համարժեքությունն է և համապատասխանաբար՝ համարժեքը: Թարգմանության տեսության և պրակտիկայի մեջ գոյություն ունի համարժեքության երկակի, իսկ ավելի ստույգ՝ լայն և նեղ ըմբռնում: Որոշ լեզվաբան գիտնականներ համարժեքների թվին են դասում բնագրի բառի կամ բառակա-

պակցության յուրաքանչյուր համապատասխանություն թարգմանության լեզվում՝ տվյալ համատեքստի համար:

3. Տարբերականության /variability/ կամ տարբերակային համապատասխանությունների /օրինաչափ զուգադրումների/ հասկացությունը:

4. Թարգմանության մեջ կարևոր դեր է խաղում նաև համատեքստը և նրա լեզուն: Թարգմանության վերաբերյալ բերված սահմանումներից երևում է, որ թարգմանաբանությունը նախ և առաջ լեզվական գործընթաց է, հետևաբար, թարգմանաբանությունը պետք է դիտարկել որպես լեզվաբանական գիտակարգ:

ЛИТЕРАТУРА

1. Հովհաննիսյան Թ.Ա., Հարությունյան Վ.Ն., Հովսեփյան Լ.Վ. «Թարգմանության տեսություն: Լեզվաբանական հայեցակետ»: – Երևան: ՀՌՀ, 2018:

ՆՈՐ ԴԱՍԱԳՐՔԻ ՄԱՍԻՆ

Թ.Ա. Հովհաննիսյան
tamusyavk@yahoo.com

Բ.գ.թ., դոցենտ
Հայ-Ռուսական համալսարանի Հումանիտար գիտությունների ինստիտուտի ռուսաց լեզվի և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի պրոֆեսոր
Երևան, Հայաստանի Հանրապետություն

ԱՄՓՈՓՈՒՄ

Մեզանում թարգմանության թե պատմական, թե արդի մշակույթի անառարկելի առկայության պայմաններում, այնուամենայնիվ, արհեստավարժ թարգմանիչների մասնագիտական և լեզվաբանական բարձր պատրաստություն ապահովելու խնդիրը լուծելու ու թարգմանության որակը բարելավելու մեծ կարիք կա։

Հենց այս նկատառումով է, որ մեր հանրապետությունում հայերենով լույս տեսած և տարբեր բուհերի մասնագետների կողմից հեղինակած թարգմանության ընդհանուր տեսության ձեռնարկների հետ զուգահեռ՝ մենք համարեցինք, որ զգացվում է լեզվաբանական ուղղության թարգմանության դասագրքի առկայության անհրաժեշտություն։

Բանալի բառեր՝ թարգմանության լեզվաբանական հայեցակետ, երկլեզվություն, թարգմանիչների պատրաստման բարձր մակարդակ, թարգմանության մասնավոր տեսություն, ռուսերենից հայերեն և հայերենից ռուսերեն թարգմանության տեխնիկա։

ABOUT NEW BOOK

T. Hovhannisyan
tamusyavk@yahoo.com

Candidate of Philological Sciences, Associate Professor,
Professor at the Department of Russian Language and Professional Communication of the Institute of Humanities Russian-Armenian University
Yerevan, Republic of Armenia

ABSTRACT

Presentation by one of the authors of a new textbook in Armenian «Translation Theory. The linguistic aspect» has the only goal – to inform students of higher educational institutions of our republic, as well as everyone who is interested in modern linguistic problems in the framework of the individual theory of Russian-Armenian and Armenian-Russian translations, that there is already such a textbook in Armenian. It seems to us that it is more accessible for those wishing to familiarize themselves with the proposed problems than sources in Russian, English, German and other languages. Moreover, a large amount of scientific and reference literature is presented in the textbook itself and makes it possible to dive into the problems of translation that interest the reader.

Guided by just such an argument, we, along with textbooks on the general theory of translation already existing in our republic and published by specialists of various universities, considered it necessary to have a textbook in Armenian on linguistic problems of translation theory.

Keywords: linguistic aspect of translation, bilingualism, high level of professional training of translators, private theory of translation, translation technique from Armenian into Russian and Russian into Armenian.

Информация о статье:
статья поступила в редакцию 3 июня 2019 г.,
подписана к печати в номер 3 (7) / 2019 – 20.09.2019 г.